ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԱՐԱԾՎԱԾ ԴՐԱՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՄԲԵՐԸ

Խ. Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆ

Վերջին երեսուն տարիների ընթացքում թանգարանները մեծապես հարստացել են տարբեր ժամանակների պատկանող մետաղե դրամներով ու դրամական գանձերով, որոնց քննությունը հնարավորություն է ընձեռում դատելու հին ու միջնադարյան Հայաստանի դրամական շրջանառության մասին, ուրվագծելու նրա զարգացման հիմնական փուլերը սկսած հելլենիստական դարաշրջանից մինչև Կիլիկիայի հայկական պետության անկման տարիները։

Ելնելով դրամագիտական փաստերից, կարելի է նշել, որ Հայաստանում հայտնաբերված վաղագույն մետաղե դրամները վերաբերում են մ. թ. ա. VI—V դդ.։ Դրանք հատուկենտ նմուշներով պահպանված միլետյան, ատտիկյան և աքեմենյան կշռային սիստեմներին պատկանող արծաթե դրամներ են։ Պետականորեն երաշխավորված որոշակի կշռային չափերով թողարկվող մետաղե դրամների շրջանառությունը, որ ծայր էր առել Փոքր Ասիայի և Հունաստանի վաճառաշահ քաղաքներում մ. թ. ա. VII դարի սկզբին, մոտ երկու հարյուր տարվա ուշացումով է դիտվում հայկական կյանքում։ Աքեմենյանների տիրակալության տակ գտնվող Հայաստանում ապրանքափոխանակությունը դեռևս կատարվում էր բնատուր ձևով, և դրամական շրջանառությունը նոր-նոր էր սկսվում։ Վերջինիս աստիճանական զարգացումը դիտվում է հելլենիստական դարաշրջանում։ Մակեդոնական շրջանի արծաթե դրամների կյուտերը պատմական Հայաստանի ողջ տարածքի վրա վկայում են այդ իրողության մասին։ Հայաստանում գտնված՝ հելլենիզմի վաղ ժամանակներին վերաբերող Ալեքսանդր Մակեդոնացու և Փիլիպոս Արիդայոսի դրամները նշում են միջազգային առևտրի այն կենտրոնները (Բաբելոն, Միլետ, Կարդիա, Մագնեզիա, Կոլոֆոն և այլն), որոնց հետ առնչված են եղել հայկական շրջանները։

Մ. թ. ա. IV դարի վերջին Հայաստանի և հարևան երկրների ապրանքաշրջանառությունը կատարվել է առավելապես ատտիկյան դրամա-կշռային սիստեմի սկզբունքով, որ լայն ճանաչում էր գտել միջազգային շուկայում։ Այդ սիստեմի հիմնական միավորը 4,36 գրամ օրինական քաշով արծաթե դրամն էր։ Ոսկե դրամները շրջանառության մեջ շատ քիչ են եղել։ Առևտուրը կատարվել է առավելապես արծաթե դրախմաներով և տետրադրախմաներով (չորեքդրամյաններ)։ Ոսկու և արծաթի փոխանակությունը միջազգային շուկայում դիտարկվել էր 1:10 հարաբերությամբ։

Հայաստանի դրամական տնտեսության փոփոխությունները կատարվում էին առավելապես արտաքին առևտրի շնորհիվ։ Ներքին շուկային բնորոշ ոչնչն դրամների շրջանառությունը դեռևս չէր սկսվել։ Հետագայում, մ. թ. ա.

III դարի վերջերից և հատկապես II դարի սկզբից դրամական շրջանառության զարգացումը դիտվում է սելևկյան, պարթևական և Հռոմի հանրապետական արծաթ դրամների տարածմամբ։ Այս ժամանակներում շրջանառության մեջ են մտնում նաև հայկական ծագում ունեցող դրամները։ Դրանք իրենց հունատառ արձանագրություններով, արքայական ու դիցական պատկերներով և միավորների կշռային չափերով բնորոշ են հելլենիստական աշխարհին և յուրահատուկ տեղ են գրավում Արևելքի հելլենիստական դրամների շարքում։ Հայկական դրամների այդ անդրանիկ օրինակները թողարկվել են Ծոփքի հայոց թագավորության կողմից, մ. թ. ա. II դարի սկզբին։ Սեփական դրամ կտրելու իրավունքը վկայում է քաղաքական անկախության մասին, սակայն հայտնի է, որ այդ իրավունքը եղել է խիստ տահմանափակ։ Այս շրջանի հայկական դրամները պղնձից էին և միջազգային գործարքներում հանդես գալ չէին կարող։ Նրանց դրվագումը կատարվել է, ամենայն հավանականությամբ, Արշամաշատ և Արկսիթիակերտ քաղաքներում, որոնք Միջագետքից ու Փոքր Ասիայից Իրան տանող ճանապարհների վրա միջազգային ապրանքափոխանակության նշանակալից կենտրոններ են եղել։ Այդ վաղ հայկական դրամների սակավությունը թույլ չի տալիս պատասխանել մի շարք հարցեր, կապված նրանց դասակարգման, ժամանակագրության և շրջանառության հետ։

Հին Հայաստանի դրամական շրջանառության զգալի ընդլայնումը կատարվել է Արտաշեսյանների հաստատման ու հզորացման տարիներին։ Երկրի դրամական տնտեսությունը այդ ժամանակներում թևակոխել էր իր զարգացման նոր փուլը, որը բնորոշվում է մի կողմից պարթևական ու հռոմեական (հանրապետության), մյուս կողմից՝ բուն հայկական ծագում ունեցող դրամների առավել լայն տարածմամբ։ Արտաշեսյան առաջին գահակալները թողարկել են պղնձե դրամներ, որոնք, ինչպես և Ծոփքի թագավորության դրամները, ունեցել են լոկ տեղական նշանակություն։ Սակայն այդ նշանակությունը ձևական չէր, այլ ներքին շուկայի պահանջից բխած էական իրողություն, քանի որ դրամի գործառնությունը արդեն դրսևորվել էր երկրի ներքին շուկայի ոլորտում։ Արտաշեսյան դրամները իրենց վրա ունեն արքայական ու դիցական պատկերներ և հունարեն արձանագրություններ։ Այդ դրամները միջազգային ճանաչում են գտել միայն Տիգրան II-ի և մասամբ նրա հաջորդ Արտավազդի գահակալության տարիներին, երբ զգալիորեն ընդլայնվել էին Հայաստանի միջազգային կապերը։ Տիգրան II-ի օրոք հայկական դրամների դրվագումը կատարվում էր ինչպես Սիրիայում, այնպես էլ բուն Հայաստանում։ Սիրիական վաճառաշահ քաղաքներից Անտիոքը և Դամասկոսը, որոնք հնուց ի վեր ապրանքափոխանակության միջազգային կենտրոններ էին, մ. թ. ա. I դարի 80-ական թթ. դարձել էին նաև հայկական արծաթե ու պղնձե դրամների թողարկման կենտրոններ։ Շրջանառության մեջ տարածված են եղել այստեղ թողարկված Տիգրան II-ի պատկերով արծաթե չորեքդրամյանները։

Հայաստանի նոր մայրաքաղաքի՝ Տիգրանակերտի հիմնադրման առաջին իսկ օրերից նրանում գործել է Տիգրանի տիրակալության փողերանոցը, որի թողարկմամբ առատորեն շրջանառության մեջ են մտել արծաթե դրամներ։ Իրանց վրա հայոց միապետը ներկայացվել է «Արքայից արքա» տիտղոսով. Արևելքին բնորոշ արքայական այդ տիտղոսով և Տիգրան II-ի պատկերով

դրամներ թողարկվել են նաև Արտաշեսյանների հին մայրաքաղաքում՝ Արտաշատում, որը Արարատյան դաշտում միջազգային ապրանքափոխանակության մի կարևոր կենտրոն էր, ուր ապրանքներով բեռնավորված քարավաններ էին ժամանում տարբեր երկրներից։ Այդ են վկայում քաղաքի միջնաբերդի հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված ինչպես տեղական, այնպես էլ օտար երկրներից բերված դրամները։

Իրենց կշռային չափերով Տիգրան II-ի դրամները անփոփոխ պահպանել են ատտիկյան սիստեմի սկզբունքները։ Տարածված են եղել առավելապես Հայաստանում թողարկված դրախմաները և սիրիական տետրադրախմաները։ Ներքին առուծախի համար թողարկվել են պղնձե դրամների երկու, մեկ, կես և քառորդ միավորները։

Տիգրան II-ը և նրա անմիջական հաջորդները դրամների վրա պատկերվել են Արևմուտքի գահակալների նման առանց մորուքի, ածիլված երեսով, բայց այնպիսի թագով, որով անմիջապես ճանաչելի են դարձել։ Արևելքի և Արևմուտքի հելլենիստական միապետներից ոչ մեկը այդպիսի թագով հանդես չէր եկել. այն ստեղծվել էր Արտաշեսյանների օրոք և լայնորեն հայտնի դարձել «հայկական թագ» անունով։

Տիգրան II-ի գահակալության տարիներին առաջին անգամ դրամների վրա պատկերվել է երկրին և պետությանը հովանավորող աստվածուհու կերպարը։ Նա ներկայացվել է իբրև մայր դիցուհի, բրգաձև թագը գլխին, գետի ափին բարձրության վրա նստած, արմավենու ճյուղը ձեռքին։ Այդ կերպարանքը, որպես քաղաքամայր դիցուհու պատկերացում, հայտնի էր քանդակագործության մեջ, բայց դրամների վրա պետական խորհրդանշան դարձավ Տիգրան II-ի օրոք և այնուհետև ամբողջությամբ կամ մասնակի ընդօրինակվեց ինքնավարություն նվաճած քաղաքների կողմից։

Բացի մայր աստվածության կերպարից, որը հայերի մոտ կապված էր Անահիտի պաշտամունքի հետ, դրամների վրա դրոշմվում էին նաև տվյալ ժամանակներին բնորոշ բնապաշտական այլ հասկացությունների պատկերներ։

Համեմատաբար քիչ են պահպանվել Տիգրան II-ի գահաժառանգ Արտավազդի և նրա անմիջական հաջորդների դրամներից, որոնք միջազգային շրջանառություն չեն ունեցել, իսկ վերջին Արտաշեսյանների օրոք խիստ սահմանափակվել և ապա բոլորովին դադարել է հայկական դրամների թողարկումը։

Միջազգային շուկայում լայն տարածում ստացած հռոմեական արծաթ դրամները վերջին Արտաշեսյանների օրոք բացարձակ առավելություն էին ձեռք բերել Հայաստանի դրամական տնտեսության մեջ և նրանց ազդեցությունը, պատկերագրության առումով, դիտվում է տեղական կերտվածքի վրա։ Օկտավիանոս-Տիգրան, Օկտավիանոս-Արտավազդ դրամներն ըստ էության հռոմա-հայկական դրամներ են։

Հռոմեական արծաթ դրամներն իրենց կշռային չափերով գործնականում հավասարազոր էին ատտիկյան սկզբունքով թողարկված պարթևական, կապադովկիական և հայկական դրախմաներին։ Վերջիններիս հետ փոխանակությունը առանձին դժվարություն չէր հարուցում։ Շրջանառության մեջ նվազող հելլենիստական արծաթե դրամների փոխարեն, արդեն մ. թ. ա. I դարի վերջերին Հռոմի հանրապետական դրամների հետ Հայաստան են թափան-

ցում նաև կայսրության շրջանի արծաթ դրամները, որոնց վիճակվեց ավելի քան երկու հարյուր տարի իշխել միջազգային շուկայում։ Հայաստանի քաղաքական վիճակի մասին՝ մ. թ. ա. I դարի վերջին տարիներից մինչև պարթևների անկման տարիները, պատմում են Հռոմի կայսերական դրամները, ինչպես շրջանառության, այնպես էլ հայ-հռոմեական ռազմա-քաղաքական իրադարձությունների արտացոլման տեսակետից։

Հարկ է նշել, որ չնայած արտաշեսյան դրամների թողարկումը I դարի սկզբին արդեն դադարել էր, բայց նրանց շրջանառությունը չէր վերացել. անցյալում թողարկված հայկական, ինչպես նաև տարբեր ծագման հելլենիստական դրամները շարունակում էին սպասարկել երկրի ներքին ու արտաքին առևտրի պահանջները։ Սակայն բեկումն արդեն կատարվել էր, և Հայաստանի դրամական շրջանառությունը թևակոխել էր իր զարգացման նոր փուլը, որը բնորոշվում էր Հռոմի կայսերական դրամների հարաճուն տարածմամբ։ Սելևկյան, կապադովկիական, արտաշեսյան, ինչպես նաև Հռոմի հանրապետական դրամները սպառվում էին, մինչդեռ նոր թողարկման (կայսերական Հռոմի) դրամները առատորեն տարածվում էին հայկական շուկաներում։ Միաժամանակ միջազգային առևտրի բնագավառում արդեն նա էր մղվել նախկինում ընդունված ատտիկյան սիստեմը, չնայած Արևելքում այն հարատևեց մինչև III դարի սկիզբը։

Ի տարբերություն հանրապետական Հռոմի, կայսրության ժամանակաշրջանում ոսկե դրամներ թողարկվում էին առավել նշանակալից չափերով։ Ոսկե դրամների հիմնական միավորը կոչվում էր աուրեուս, որը 8,19 գրամ օրինական քաշ ուներ. մեկ ֆունտ ոսկուց (327,45 գրամ) հատում էին 40 աուրեուս։ Շրջանառության մեջ հիմնական միավորը հռոմեական արծաթ դրամն էր, որը կոչվում էր դենար (լատիներեն denı— «տասնյակ» բառից)։ Վաղ կայսերական Հռոմի դենարը պարունակում էր ֆունտի 1/84 մասը, այսինքն՝ 3,90 գրամ արծաթ։ Ոսկու և արծաթի փոխանակությունը դրսևորվում էր մոտ 1:12 հարաբերությամբ։ Ներքին շուկայի մանր առևտրի համար թողարկում էին պղնձի և արծաթի խառնուրդով, մեկ ունցիա (27,30 գրամ) քաշ ունեցող, ինչպես նաև վերջինիս ստորաբաժանումները կազմող դրամական մանր միավորներ։ Արծաթի և պղնձի փոխանակությունը որոշ տատանումներով նշվում էր 1:45 հարաբերությամբ։

Կայսրության կողմից թողարկվում էին նաև Հայաստանին վերաբերող ոսկե, արծաթե ու պղնձե դրամներ, որոնց պատկերագրությունը հաղորդում էր Հայաստանի պարտված կամ կախյալ քաղաքական վիճակը։ Այդ տիպի դրամներով ու շքադրամներով կայսրությունը նպատակ ուներ տարածել հռոմեական գենքի փառքը և դրանով իսկ հնազանդության մեջ պահել նվաճված երկրների ժողովուրդներին։

Հայաստանին վերաբերող հռոմեական ծագում ունեցող դրամներն ու շքադրամները դանդվածային թողարկում չեն ունեցել և հայկական քաղաքներում լայնորեն տարածված չեն եղել։ Հայաստանում վաղ կայսերական շրջանի դրամներից հայտնի են եղել Օկտավիանոս Օգոստոսի և նրա երկու որդեգիրների՝ Գայուսի և Լուցիուսի պատկերներով արծաթե դրամները, որոնք վկայում են հռոմեական դրամների նոր հոսանքը Արտաշեսյանների անկման և Արշակունիների հաստատման տարիներին։ Դրանք ի հայտ են եկել Հայաստանի, Ադիաբենի ու Վրաստանի ողջ տարածքի վրա։ Բացառված չէ, որ

Օկտավիանոս Օգոստոսի և նրա որդեգիրների պատկերներով արծաթ դրամները թողարկվել են ու շրջանառության մեջ մտել ոչ միայն Հռոմի եվրոպական տիրույթներում, այլև Արևելքում։

Հռոմեական կայսրության վաղ շրջանի այդ դրամները թափանցել են հայկական շուկաները միջազգային առևտրի այն ուղիներով, որոնցով շրջանառության մեջ էին մտել անցյալում հելլենիստական և Հռոմի հանրապետական դրամները։ Սիրիայի ու Միջագետքի շուկաներից ապրանքափոխանակությունը բերում էր նրանց Արաքսի հովիտը և այնուհետև Կուրի ավազանով տանում Վրաստան ու Աղվանք։ Արծաթե բարձրորակ այդ դրամները միջազգային շուկայում վստահություն էին շահել և ճանաչվում էին իբրև ամենակայուն դրամական միավորները։ Հետագայում դրանց ընդօրինակությամբ հոնդես եկան տեղական կերտվածքի դրամներ։

Հայաստանում վաղ կայսերական այդ դրամների տարածման հետ միաժամանակ շրջանառության մեջ են եղել նաև Պարթև Վոնոն արքայի պատկերով դրամական միավորները։ Վերջինների դրվագումը հավանաբար մասամբ կատարվել է նաև Հայաստանում, ուր Վոնոնը Հռոմի կողմից թագավոր էր հաստատվել մ. թ. 8—16 թթ.։ Սակայն Վոնոնի դրախմաները և տետրադրախմաները լայն տարածում չեն ունեցել, Հռոմի կայսերական դրամների համեմատ դրանք շատ քիչ են եղել։

Սահմանափակ թողարկում և աննշան տարածում են ունեցել նաև Վոնոնին Հայոց գահի վրա փոխարինող Արտաշես-Զենոնի (18—34 թթ.) դրամները, որոնք հատուկենտ նմուշներով հայտնի են թանգարանային ժողովածուներից։ Դրանք շրջանառության համար բնորոշ չեն եղել և կարող են ընդհատվել իբրև հայ-հռոմեական հարաբերություններին վերաբերող առանձին վկայություններ։ Այդուհանդերձ որոշակի է, որ Հայաստանի դրամական շրջանառությունը I դարի սկզբին շարունակել է կատարվել հիմնականում հռոմեական դրամներով, առևտրական գործարքները իրականացվում էին առավելապես հռոմեական դենարներով։ Պարթևական դրախմաները շրջանառության մեջ գրեթե աննկատ էին դարձել։ Ուշագրավ է, որ 62 թ. Հռոմի կայսրությունը Ներոնի ռեֆորմով նվազեցրել էր արծաթ դենարի քաշը և այն սահմանել ֆունտի 1/96 մասը, այսինքն դարձրել մոտ 3,40 գրամ։ Նվազել էր նաև արծաթի պարունակությունը հռոմեական արծաթ դրամի մեջ, կազմելով 55—65 տոկոս։ Կայսրության հետռեֆորմյան այդ դրամները թափանցել են Հայաստան Արշակունիների հաստատման ժամանակներում։ Հայաստանի Արշակունի գահակալները իրենց սեփական դրամները չեն ունեցել, դրամի թողարկման իրավունքը վերապահված է եղել Արշակունյաց ավագ տոհմին՝ Իրանի Պարթևաց թագավորության։

Հայ Արշակունիների տիրակալության վաղ ժամանակներում միջազգային առևտրի բերումով հայկական քաղաքներ են թափանցել Վեսպասիանոսի, Տիտոսի, Դոմիցիանոսի պատկերներով Հռոմի կայսերական դենարները։ Նախապատվությունը տրվել է նախառեֆորմյան, Օկտավիանոս Օգոստոսի՝ արծաթի բարձր պարունակություն ունեցող դրամներին։ Արդեն II դարում հայկական շուկաներում տարածում են գտել Տրայանոսի, Հադրիանոսի, Անտոնինոս Պիոսի, Մարկոս Ավրելիոսի և Լուկիոս Վերոսի պատկերներով հռոմեական արծաթե դրամները, իսկ պարթևական դրամներ Հայաստանի II դարի դանձերի կազմում չեն արձանագրված։ Երևան են գալիս հռոմեական պղնձե

շքադրամներ, թողարկված II դարի նշանավոր ռազմա-քաղաքական իրադարձությունների առթիվ։ Այդ շքադրամները, ինչպես դրանց նախորդները, ունեցել են ցուցադրական նշանակություն, որոնց պատկերագրությունից երևվում է Հռոմի բացահայտ միջամտությունը Հայաստանի ներքին գործերին։ Հայաստանի դրամական շրջանառության համար շքադրամները բնորոշ չեն, դրանք թողարկվել են Հռոմում և մետրոպոլիայից դուրս լայն տարածում չեն ունեցել։

II դարի 60-ական թթ. մինչև III դարի սկիզբը Հայաստանի դրամական շրջանառությունը լցրեցել է Հռոմեական կայսրության՝ ընդհանուր պատկերագրություն ունեցող դրամներով, որոնք գալիս էին Հայաստան ինչպես Միջերկրականի արևմուտքից, այնպես էլ Մերձավոր Արևելքի վաճառաշահ կենտրոններից։ Այդ է վկայում Գառնի ամրոցի ավերակներում հայտնաբերված կայսերական Հռոմի դրամների դանձը, բաղկացած Վեսպասիանոսի, Տիտոսի, Տրայանոսի, Հադրիանոսի, Ա. Պիոսի, Մ. Ավրելիոսի և Կոմմոդոսի պատկերներով արծաթ դենարներից, որ արտացոլում են Հայաստանի դրամական շրջանառության կազմը II դարի վերջին։ Այդ ժամանակներում հռոմեական դրամների տարածումը հասել էր իր առավելագույն չափերին։ Հայաստանը, իբրև բուֆերային երկիր Արևելքի և Արևմուտքի միջև, ընդգրկված է եղել հռոմեական դրամներով կատարվող միջազգային ապրանքափոխանակության ոլորտը։ Երկրորդ դարի վերջին Արտաշատում դրվագվում են պղնձե դրամներ քաղաքային շուկայի ներքին կարիքների համար։ Դրանք շրջանառության մեջ են մտցվել ոչ թե Հռոմի կայսեր կամ Արշակունի հայ թագավորի անունից, այլ մայրաքաղաք Արտաշատի։ Այդ իրողությունը թույլ է տալիս ենթադրելու, որ տարանցիկ առևտրի խոշոր կենտրոն հանդիսացող Արտաշատը հավանաբար ինքնավարություն է ունեցել։ Արտաշատի դրամը իր պատկերագրությամբ անմիջապես ճանաչելի է դառնում Հռոմի կայսերական դրամների հոծ զանգվածում. քաղաքամայր աստվածուհու դիմաքանդակը, քաղաքի անվան հունատառ արձանագրությունը, հաղթության պսակաբեր դիցուհու կանոնիկ պատկերը և պատկերագրության այլ տարրեր վկայում են հելլենիստական ավանդույթների մասին։

III դարի սկզբից Հայաստան են թափանցում թեթև քաշի հռոմեական արծաթ դրամները, այսպես կոչված «Անտոնինիանները», որոնք թողարկվում էին Կարակալա կայսեր դրամական ռեֆորմից հետո։ Արծաթի չնչին պարունակություն ունեցող այդ դրամները Հայաստանի դրամական տնտեսության համար էական նշանակություն չեն ունեցել։

Դրամական շրջանառությունը Հայաստանում III դարի 30-ական թթ. թևակոխել է իր զարգացման հաջորդ փուլը, որը բնորոշվում է երկրում սասանյան դրամա-կշռային սիստեմի հաստատմամբ։ Արդեն IV—VII դդ. սասանյան դրահիմաները ամենալայն տարածում են ստանում Հայաստանում։

Ի տարբերություն Պարթևների, Սասանյանները բոլորովին նոր պատկերագրության դրամներ թողարկեցին Իրանում և վերջինիս ենթակա երկրներում։ Նոր դարաշրջան բացվեց Արևելքի դրամագործության մեջ։ Սակայն վաղ շրջանի սասանյան դրամները նախապես շատ աննշան քանակ էին կազմում ամենուրեք տարածված հռոմեական դրամների համեմատությամբ։ Հետագայում Իրանի հետ կապված հայկական կենտրոններում նրանց տարածումը գնալով ավելի նշանակալից է դառնում։ Սասանյանները թողարկում էին ոս-

կե, արծաթե ու պղնձե դրամներ։ Ոսկե դրամները սկզբում դրվագվում էին միջազգային շուկայում իշխող հռոմեական աուրեուսի քաշին համապատասխան՝ 8,19 գրամ, սակայն հետագայում նրանց քաշը նվազեց։ Սասանյան ոսկե դրամները հազվագյուտ են և Հայաստանում ու հարևան երկրներում գործնական նշանակություն չեն ունեցել։ Հազվագյուտ են նաև սասանյան պղնձե դրամները։ Ամենատարածվածը եղել են արծաթե դրամները, որոնք և շրջանառության մեջ են եղել վաղ միջնադարի հայկական շուկաներում։ Սասանյան դրամակշռային սիստեմի հիմնական միավորը հանդիսացել է մոտ չորս գրամ քաշ ունեցող արծաթե դրախման։ Ի հակադրություն պղնձի խառնուրդով ուշ պարթևական արծաթ դրամների, Սասանյանները միշտ բարձր են պահել իրենց դրախմայի արժանապատվությունը արծաթի որակի տեսակետից։

Հայաստանում գտնված ամենավաղ սասանյան դրամը վերաբերում է III դարի առաջին կեսին։ Այն թողարկված է Սասանյանների առաջին գահակալի պատկերով և պաշտամունքային խորհրդանշաններով։ Հայտնաբերվել են նաև Արտաշիրի անմիջական հաջորդների օրոք թողարկված դրախմաները։

III դարի վերջին հայկական քաղաքներում խիստ նվազել են անցյալից մնացած պարթևական և հռոմեական (կայսերական) դրամները։ Շրջանառությունը զարգացել է սասանյան դրամների առավելությամբ։ Տարածվել են նաև ուշ հռոմեական շրջանի դրամները, մասնավորապես IV—V դդ. ուշ հռոմեական ոսկե դրամները։ Փոխանակությունը ոսկու և արծաթի միջև դիտվում է 1:14 հարաբերությամբ։ Սակայն ներքին ու արտաքին առևտրի մեջ առավելապես տարածված էին սասանյան արծաթ դրամները։ Այդ առավելությունը բացարձակ է դառնում VI—VII դդ.։ Ապրանքափոխանակության շնորհիվ հայկական շուկաները են մտել Ջերալում, Խորասանում, Ֆարսում, Խուզիստանում, Սեջստանում և Իրանի այլ նահանգներում թողարկված սասանյան դրախմաներ, որոնք կրում են Սասանյան գահակալների պատկերները և պահլավերեն արձանագրություններ։ Այդ դրամները վերաբերում են առավելապես V—VII դդ.։ Դրամների տվյալներից երևում է, որ այդ երկու հարյուր տարիները հանդիսանում են հայ-իրանական տնտեսական կապերի լայն տարածման ժամանակաշրջան։ Հետաքրքիր է, որ VI դարի վերջերից քաղաքային կյանքի զարգացման պահանջով սասանյան պատկերագրությամբ արծաթ դրամներ թողարկվում են նաև Իրանին ենթակա հայկական քաղաքներում, մասնավորապես Դվինում և Նախճավանում. այդ են վկայում վերջիններիս անունների պահլավերեն գրությունները դրամների վրա։

Սասանյան դրախմաների տարածման հետ մեկտեղ, VI դարի վերջին և VII դարի սկզբին Հայաստան են թափանցել նաև բյուզանդական ոսկե ու արծաթե դրամները՝ մասնավորապես Հուստինիանոս, Տիբերիոս, Փոկաս և Հերակլես կայսրների ոսկե և Հերակլեսի ու նրա գահաժառանգների արծաթե դրամները. վերջիններս իրենց քաշով (6,50—6,90 գրամ) մոտ երկու անգամ ծանր էին սասանյան դրախմաներից։ Հայաստանում սասանյան և բյուզանդական արծաթ դրամները VII դարում շրջանառության մեջ էին միաժամանակ, և յուրաքանչյուր բյուզանդական արծաթ դրամ (այսպես կոչված կրկնակի միլիարենս) փոխանակվում էր սասանյան դրախմայի հետ 1:2 հարաբերությամբ։

VII դարի երկրորդ կեսին դրամական շրջանառությունը Հայաստանում

Բնակոխել է իր զարգացման հաջորդ փուլը, որ բնորոշվում է սասանյան, ինչպես նաև վաղ բյուզանդական դրամների սպառմամբ և արաբատառ դրամների տարածմամբ։ Անցումը հին դրամական համակարգից նորին կատարվել է աստիճանաբար։ Արաբական իշխանություններն իրենց նվաճած երկրներում սկզբում պահպանել են անցյալում ընդունված դրամակշռային սկզբունքները։ Սասանյանների կործանումից հետո նրանց օրոք թողարկված դրամները շրջանառությունից չեն հանվել։ Իրանում և բյուզանդական տիրապետության արևելյան շրջաններում հաստատված արաբական նահանգապետները սկզբնական շրջանում թողարկել են սասանյան և բյուզանդական դրամների ընդօրինակությամբ, սակայն արաբերեն գրերով ոսկե, արծաթե ու պղնձե դրամներ։ Այդ, այսպես կոչված արաբա-սասանյան և արաբա-բյուզանդական դրամները Հայաստանի հյուսիս-արևելյան շրջաններում և ընդհանրապես Անդրկովկասում տարածում չեն ունեցել։ Հավանական է, որ առանձին դեպքերում դրանք թափանցել են Սիրիային և Բյուզանդիային մերձավոր հայկական շուկաները։

VII դարի վերջին խալիֆ Աբդ-ալ-Մելիքի հատուկ ռեֆորմով հիմք է դրվում արաբական ազգային դրամների թողարկմանը։ Արաբական խալիֆայությունը ստեղծեց իր դրամակշռային սիստեմը, որը շուրջ երեք հարյուր տարի իշխեց միջազգային ապրանքաշրջանառության մեջ։ Սիստեմատիկաբար թողարկվում էին արաբական ոսկե, արծաթե ու պղնձե դրամներ։ Շրջանառության մեջ հիմնական միավորը դիրհեմ կոչված արծաթ դրամն էր, որի օրինական կշիռը սահմանված էր 2,97 գրամ։ Ոսկե դրամները (4,25 գրամ կշռով) թողարկվում էին սահմանափակ չափով։ Արաբներն այդ ոսկեդրամը կոչում էին դինար, իսկ հայերը՝ դահեկան։ Օմայանների տիրապետության ժամանակներում արաբական ոսկեդրամները թողարկվում էին Սիրիայում, Եգիպտոսում և Իսպանիայում։

Հայաստանում և նրա մերձակա շրջաններում վաղ արաբական ոսկե դրամներ չեն գտնվել։ Հայաստանում տարածված են եղել արաբական արծաթ դրամները, որ առևտրականները բերում էին Օմայանների տիրակալության կենտրոնական նահանգներից։ Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և հյուսիս-արևելյան գավառները, հարևան Վրաստանի արևելյան շրջանների ու Աղվանքի հետ միասին մինչև Դերբենդ, խալիֆայության վարչական բաժանմամբ միավորված էին մեկ նահանգի մեջ, որ կոչվում էր Արմինիա։ Խալիֆայության դրամական սիստեմի ստեղծումից հետո Օմայանները դրամներ էին թողարկում Դվինում, Թիֆլիսում, Գանձակում, Դերբենդում, ինչպես նաև Արմինիայի մեջ մտնող այլ կենտրոններում։ VIII դարի սկզբին, շուրջ հիսուն տարի այդ վաղ արաբական դրամները թողարկվում էին առավելապես ողջ նահանգի՝ Արմինիայի անունով, որի վարչական կենտրոնը Հայաստանի Դվին վաճառաշահ քաղաքն էր։ Թողարկվում էին դրամներ արծաթից և պղնձից։ Տեղական կերտվածքի դրամներից բացի շրջանառության մեջ էին մեծ մասամբ Իրաքի, Ջազիրայի, Ջեբալի և Ադրբեջանի քաղաքներում դրվագված արծաթե դրամներ, որոնց տարածումը ցույց է տալիս Հայաստանի կապը խալիֆայության հիշյալ նահանգների հետ։

VIII դարի երկրորդ կեսից խալիֆայության ներքին ու արտաքին առևտրի զարգացմանը զուգընթաց ընդլայնվում է Հայաստանի դրամական շրջանառության ոլորտը։ Աբբասյանները, որոնց ձեռքն էր անցել տիրակալությունը,

Հայաստանում դրամներ էին դրվագում ավելի զանգվածաբար, քան նրանց նախորդ Օմայանները։ Աբբասյան դրամների թողարկումը Հայաստանում նշվում է խալիֆ Ալ-Մանսուրի գահակալության տարիներից (754—775) սկսած։ Աբբասյանները չէին փոխել Օմայանների օրոք ստեղծված արաբական դրամա-կշռային սիստեմը, օմայան դրամները փոխանակվում էին աբբասյան դրամների հետ հավասարապես։ Հիմնական միավորը մնում էր դիրհեմ կոչված արծաթ դրամը՝ 2,97 գրամ քաշով։ Պղնձե դրամները՝ ֆելսերը, ինչպես անցյալում, թողարկվում էին մանր առուծախի համար և տեղական շուկայի սահմաններից դուրս չէին անցնում։ Ժամանակագրական առումով Հայաստանում թողարկված վաղագույն արծաթ դրամը վերաբերում է Հիջրայի 143 (մ. թ. 760—761) թթ.։ Աբբասյանները դրամների վրա դրոշմում էին Ղուրանից քաղված կրոնական իմաստի ասույթներ, ինչպես այդ անում էին Օմայանները, բայց ի տարբերություն Օմայանների, իբրև նշանաբան ընտրել էին «Մուհամմեդն Ալլահի առաքյալն է» ասույթը։ Սկզբնական շրջանում դրամները թողարկում էին առանց իշխանական անունների, իսկ VIII դարի 60-ական թթ. աբբասյան դրամների վրա արաբերեն «քուֆի» գրելաձևով հիշատակվում էին խալիֆայության դահաժառանգների և նահանգային փոխարքաների անունները։

Արմինիայի աբբասյան դրամների վրա արձանագրված տեղանունները, տարեթվերը և անձնանունները հավաստի վկայություններ են VIII—X դդ. հայ-արաբական հարաբերությունների ժամանակագրության ու պատմության համար։ Աբբասյան դրամների թողարկման գլխավոր կենտրոնները Հայաստանում և Աղվանքում շարունակում էին մնալ Դվինն ու Պարտավը, չնայած առանձին դեպքերում դրամներ թողարկվում էին նաև Արմինիայի այլ քաղաքներում։ Դրամագյուտերը ցույց են տալիս, որ Հայաստանի դրամական շրջանառության կազմում աբբասյան դրամները բացարձակ առավելության են հասել Բագրատունիների թագավորության տարիներին։ IX դարի վերջին և X դարի ընթացքում շրջանառության մեջ գրեթե սպառվել էին խալիֆայության վաղ շրջանին բնորոշ օմայան դրամները։ Հայերեն գրերով և կամ հայ իշխանների անուններով դրամներ չէին թողարկվում։ Միջազգային ապրանքաշրջանառությունը հայկական շուկաներն էր բերում Աբբասյանների տիրակալության տակ գտնվող Բաղդադում, Մոսուլում, Բասրայում, ալ-Քուֆայում, Տուստեր-Մին-ալ-Ահվազում, ալ-Մուհամմեդայում, Ռաս-ալ-Այնում, Ամիդում, Արդեբիլում, Շիրազում, Սամարղանդում, աշ-Շաշում և շատ այլ քաղաքներում հատված արծաթե դրամներ։

Հայաստանի արտաքին առևտուրը զարգանում էր Արևելյան խալիֆայության արտաքին ու ներքին առևտրի ոլորտում։ Աբբասյան արծաթ դրամները Հայաստանում ունեին միջազգային նշանակություն։ Ոսկե դրամներ Աբբասյանները Հայաստանում չէին թողարկում և ընդհանրապես ոսկե դրամներն առավելապես հաշվային նշանակություն ունեին։ Ոսկու և արծաթի փոխանակությունը IX—X դդ. դրսևորվել էր 1:10, երբեմն 1:14 հարաբերությամբ։ Սակայն այդ փոխհարաբերությունը կայուն չէր և մշտապես տատանվում էր՝ նայած շուկայում նրանց գների փոփոխմանը։ Հայկական քաղաքներում թողարկված աբբասյան արծաթ դրամները տարածվում էին ընդհուպ մինչև արևելյան և հյուսիսային Եվրոպայի երկրները։ Սակայն այդ անցումը կապված էր աբբասյան դրամների միջազգային տարածման հետ, որը հետևանք

էր խալիֆայության արտաքին առևտրի։ Արմինիայի քաղաքներում, տեղական շուկայի մանր առուծախերի համար շրջանառության մեջ էին տեղական թողարկման աբբասյան պղնձե դրամները։

IX դարի վերջին և X դարում շրջանառության մեջ են մտնում խալիֆայության ներսում առաջացած առանձին էմիրությունների արաբատառ դրամները։ Սաջյանները Հայաստանում և Աղվանքում, ինչպես նաև Ադրբեջանում թողարկում էին իրենց սեփական ոսկե ու արծաթե դրամները։ Դվին, Պարտավ, Մարաղա և Ռեյ քաղաքները հանդիսացել են սաջյան դրամների թողարկման կենտրոնները։ Կշռային չափերով և արաբերեն արձանագրությունների ընդհանուր ձևավորմամբ Սաջյան էմիրների դրամները գրեթե չէին տարբերվում աբբասյան դրամներից։ X դարի երկրորդ կեսից Հայաստանում շրջանառության մեջ են մտել նաև Սալլարյան էմիրների արծաթե ու ոսկե դրամները։ Սակայն Հայաստանի դրամական տնտեսության մեջ իշխող աբբասյան դրամների հոծ զանգվածում սաջյան և սալլարյան դրամները շատ աննշան քանակ են կազմել։ Աբբասյան դրամների հետ նրանք ևս դուրս են եկել իրենց ծագման վայրերից և անցել հեռավոր շուկաներ։ Եվրոպայում գտնված IX—X դդ. դրամական գանձերի կազմում աբբասյան դրամների հետ միասին հանդիպում են նաև սաջյան ու սալլարյան դիրհեմներ։ Միջազգային առևտուրը խալիֆայության տարբեր երկրամասերից Հայաստան է բերել և տարբեր ուղղություններով Եվրոպա է տարել Աբբասյանների ու նրանց ենթակա էմիրների արծաթե դրամները, որ թողարկված են ոչ միայն Իրաքի, Սիրիայի և Իրանի տնտեսական կենտրոններում, այլև հայկական քաղաքներում։ Այդ են վկայում Եվրոպայում գտնված դրամական գանձերը։

X դարի վերջին և հատկապես XI դարում դրամական շրջանառությունը Հայաստանում թևակոխել էր իր զարգացման նոր փուլը, որ բնորոշվում է լիարժեք արծաթ դրամների աստիճանական սպառմամբ։ Բագրատունիների անկման տարիներին արտաքին առևտրի շնորհիվ Արևելքի երկրներից առատորեն Հայաստան եկող արծաթ դրամների հոսանքը խիստ նվազել էր։ XI դարի սկզբից Միջին Ասիայից մինչև Փոքր Ասիա ձգվող երկրներում դադարել էին արծաթե դրամներ թողարկել։ Դա տևում է շուրջ երկու հարյուր տարի։ Հայաստանում արծաթի պակասը դիտվում է նախ և առաջ շեդդադյան դրամներից, որոնք արծաթի չնչին պարունակության դիրհեմներ էին և XI դարում տարածված էին Աղվանքում ու Հայաստանի հյուսիս-արևելյան կողմերում։ Պատրաստված լինելով վատորակ արծաթից, շեդդադյան դրամները միջազգային առևտրում լայն ընդունելություն չունեին և ներքին շուկայի սահմաններից դուրս չէին անցնում։

Հայաստանում և այլ երկրներում X դարի վերջից ու առավելապես XI դարում լայն տարածում են ունեցել բյուզանդական ոսկե ու պղնձե դրամները, որոնց առավելությունը արծաթի սուղության պայմաններում բիմետալիզմ էր դրսևորել դրամական տնտեսության մեջ։ Դրամագյուտերը վկայում են, որ Հայաստանում և հարևան երկրներում XI դարում ամենատարածված դրամները բյուզանդական ոսկե և պղնձե դրամներն են եղել։

Արծաթի պակասությունը XI դարում որոշակի էր դարձել նաև Բյուզանդական կայսրության մեջ։ Հայաստանում և հարևան երկրներում բյուզանդական արծաթ դրամներ չեն գտնվել։ Հայտնաբերված ոսկե դրամները դուրս են եկել Կոստանդնուպոլիս քաղաքից։ Հայաստանում առատորեն հայտնաբեր-

ված XI դարի պղնձե դրամները, որոնք նախատեսված են եղել ներքին շուկայի համար, իրենց վրա կրում են Քրիստոսի պատկերը։ Բացառված չէ, որ դրանք թողարկվել են առևտրի հայկական կենտրոններում, երբ Բագրատունիների անկումից հետո իշխանությունը անցել էր կայսրության ձեռքը։ Այդ են վկայում Անի և Դվին քաղաքների պեղումների ժամանակ հայտնաբերված XI դարի պղնձե բյուզանդական դրամները։ Շիրակում և Այրարատում համարյա ամենուրեք հայտնաբերված են XI դարի անտարեթիվ և անանուն պղնձե դրամներ՝ Քրիստոսի պատկերով։ Պատկերագրության առումով դրանք քրիստոնեական Արևելքում ընդունված դրամներ էին։ XI դարի երկրորդ կեսին Տաշիր-Զորագետի Բագրատունյաց ճյուղի փոքրիկ թագավորությունը բյուզանդական այդ դրամների ընդօրինակությամբ, Քրիստոսի պատկերով, բայց հայերեն գրերով պղնձե դրամներ թողարկեց, որոնք յուրահատուկ տեղ են գրավում միջնադարյան Հայաստանի դրամական շրջանառության կազմում։ Հայերեն գրերով այդ դրամների թողարկումը ունեցել է տեղական նշանակություն, դրանք Լոռվա շուկայի նեղ սահմաններից դուրս չեն անցել։

XII դարի սկզբից Հայաստանում ամենալայն տարածում էին ստացել սելջուկյան ծագում ունեցող պղնձե դրամները, իսկ ապրանքափոխանակության արտաքին գործարքներում շարունակում էին իշխել Բյուզանդական կայսրության ոսկե դրամները։ Սելջուկյան արշավանքների վաղ ժամանակներից նկատվող արծաթի պակասը («արծաթի ճգնաժամ»), որի պատճառները գիտության կողմից դեռևս լրիվ բացահայտված չեն, Հայաստանում իր դրսևորումն է գտել XII դարում, երբ երկրի հյուսիս-արևելյան շրջաններում տարածված են եղել բացառապես պղնձե իլդեգիզյան ու այնուհետև պղնձե վրացական դրամները։ Հայաստանի հարավ-արևմտյան մասերում արծաթե դրամների փոխարեն ընդունվել են պղնձե օրտուկյան, զենգյան, դանիշմենդյան, մենգուջակյան, սելջուկյան ծագման և վարկային նշանակություն ունեցող այլ դրամներ։ Իլդեգիզյան աթաբեկները և վրաց Բագրատունի գահակալները XII դարում թողարկել են բացառապես պղնձադրամներ։ Հայաստանում հայտնաբերված իլդեգիզյան և վրացական պղնձե դրամները նույնպես վարկային նշանակության դրամներ են եղել։ Նրանք առատորեն հայտնաբերվել են Շիրակում ու Այրարատում, և դա խոսում է Ադրբեջանի ու Վրաստանի հետ Հայաստանի դարգացած առևտրի մասին։ Բացառված չէ, որ Դվին քաղաքը առանձին դեպքերում եղել է իլդեգիզյան դրամների թողարկման կենտրոններից մեկը հյուսիս-արևելյան Հայաստանում։ Հարավային և Արևմտյան Հայաստանում սելջուկյան պղնձե դիրհեմներ թողարկվել են Սեբաստիա, Մալաթիա, Երզնկա, Սարդին, Խլաթ, Մանազկերտ և այլ քաղաքներում։

XII դարի վերջին և հատկապես XIII դարի սկզբին ընդլայնվում է վրաց թագավորության պղնձե դրամների տարածումը Հայաստանի հյուսիս-արևելյան կողմերում։ Դրանք առավելապես Թամար թագուհու գահակալության տարիներին թողարկված վրացերեն և արաբերեն արձանագրություններով պղնձադրամներ էին, որոնք շրջանառության մեջ անմիջապես ճանաչելի էին դառնում իրենց վրա ունեցած Բագրատունյաց տոհմական նշանով։ XIII դարի առաջին կեսին հայկական քաղաքներում տարածված վրաց դրամների վերջին խումբը Ռուսուդան թագուհու պղնձե դրամներն էին, որոնք շրջանառության մեջ էին գտնվում իլդեգիզյան վերջին պղնձե դրամների հետ միասին։ XIII դարի սկզբին Հայաստանում և հարևան երկրներում արդեն ավարտվել էր

«արծաթի ազնաժամը», և Մերձավոր Արևելքի պետությունները կրկին սկսել էին թողարկել լիարժեք արծաթ դրամներ։

XIII դարի 30-ական թթ. հայկական շուկաներ էին թափանցում մի կողմից Փոքր Ասիայի սելջուկյան, մյուս կողմից՝ Արևելքը նվաճող մոնղոլական իշխանությունների դրամները։ Հայաստանում գտնված մոնղոլական ծագում ունեցող վաղագույն արծաթ դրամները վերաբերում են 1232—1233 թթ.։ Դրանք նախապես առանց իշխանական անունների արծաթ դիրհեմներ էին, թողարկված Չինգիզ խանի գահաժառանգի՝ Ուգեդեյի ինքնակալության տարիներին Իրանում, Վրաստանում և Աղվանքում։ Մոնղոլական արծաթ դրամների տարածմամբ դրամական շրջանառությունը Հայաստանում թևակոխում է իր զարգացման մի այլ փուլը։

Առևտրում վաղ մոնղոլական շրջանի արծաթ դրամները բարձր էին գնահատվում, փոխանակությունը ոսկու և արծաթի միջև հաշվվում էր մոտ 1:7 հարաբերությամբ։ Դրամական միավորների անվանումները չէին փոխվել։ Խալիֆայության ժամանակներից միջազգային ճանաչում գտած դենար, դիրհեմ և ֆելս անունները ոսկե, արծաթե ու պղնձե դրամների համար պահպանվել էին նույն հասկացություններով։ Բացի թեթև քաշի պղնձե դրամներից թողարկում էին նրանց կրկնակի կշիռով դրամներ, որոնք կոչվում էին «դանգ»։ Մինչև XIII դարի երկրորդ կեսը միջազգային շրջանառության մեջ մոնղոլական ծագում ունեցող արծաթ դրամները հանդես էին գալիս Սեբաստիայում, Կոնիայում և Կեսարիայում թողարկված դիրհեմների հետ միասին։

Սակայն հետագայում սելջուկյան արծաթե դրամները նվազում են և արդեն XIII դարի ավարտին Հայաստանի դրամական տնտեսության մեջ առավելությունը բացահայտորեն անցնում է Իրանի մոնղոլական խանների կողմից թողարկված դրամներին։ Այն տարածում էին ստացել Մանգու խանի և նրա եղբոր՝ Հուլաղուի դրամները, ինչպես նաև այդ տարիներին թողարկված, աջուրներեն արձանագրության դրոշմով մոնղոլական անանուն դրամները։ Աբաղա խանի իշխանության տարիներին հայկական քաղաքներում թողարկվել են քրիստոնեական իմաստի հայերեն արձանագրություններով պղնձադրամներ, ըստ որում դրանց վրա կային նաև արաբերեն և ույղուրերեն արձանագրություններ։ Թողարկվել են նաև արծաթ դրամներ, որոնց վրա արաբատառ Յանուն հոր եւ որդոյ եւ հոգւոյն սրբոյ աստուծոյ միածին բառերից բացի կա նաև ույղուրերեն արձանագրություն։ Սակայն արծաթի լիարժեք պարունակություն ունեցող այդ դրամները երկար շրջանառություն չունեցան։ XIII դարի վերջին տարիներին Հուլաղույանների դրամական տնտեսությունը սնանկացել էր։ Ոսկուց և արծաթից դրամների թողարկումը մի որոշ ժամանակ կանգ առավ։ Հատուկ հրամանով, հիջրայի 693 (մ. թ. 1293/94) թ. նախաձեռնվեց թղթադրամների թողարկումը, որը, սակայն, վաղանցուկ եղավ։ XIV դարի սկզբին Ղազան Մահմուդ խանի հրամանով Հուլաղույանները սահմանեցին նոր դրամակշռային սիստեմ, որի հիմնական միավորը համարվեց 2,145 դրամ արծաթի օրինական քաշով դիրհեմը։ Հանդես եկան դրամական նոր միավորներ, ոսկու գծով «ղազանի» և արծաթի գծով՝ «միրի» անուններով։ Փոխանակությունը ոսկու և արծաթի միջև կատարվում էր 1:12 հարաբերությամբ։ Թողարկվում էին նաև երեք մսխալ կշռով արծաթ դրամներ, որոնք կոչվում էին արծաթ դինար։ Երեք արծաթ դինար «միրի» կոչվող ամենախոշոր արծաթ դրամական միավորն էր։ Ապրանքափոխանակության գործարքնե-

յում հանդես էր եկել «թուման» կոչվող հաշվային միավորը, որ հավասար էր 10.000 արծաթ դինարի։ Ղազան Մահմուդի ռեֆորմով սահմանված դրամները թողարկվում էին Հուլաղույանների տիրապետության տակ գտնվող բազմաթիվ քաղաքներում, այդ թվում նաև Անի, Գառնի, Պարտա, Նախճավան, Խլաթ, Արճեշ, Կարին, Երզնկա, Սեբաստիա և այլ քաղաքներում։ Սակայն Ղազան Մահմուդի ռեֆորմով սահմանված կշռային չափերը կայունություն չունեցան, արծաթ դրամի կշիռը գնալով խիստ նվազեց, և արդեն 1336 թ. այն թողարկվում էր 1,43 գրամ միջին քաշով։ Ներքին շուկայի զարգացման պահանջով Անի քաղաքում դրվագում էին նաև պղնձե դրամներ։ XIV դարի կեսին արծաթ դրամի կշիռը նվազելով հասավ մոտ կես գրամի։ Արծաթի սուղությունը դրամագործության մեջ բացահայտ էր դարձել։ Ինչպես Հայաստանում թողարկված, այնպես էլ արտաքին առևտրի շնորհիվ հայկական շուկաները թափանցած XIV դարի վերջի արծաթ դրամները թեթև քաշի դիրհեմներ են, որոնք թույլ են տալիս հետևել երկրի միջազգային կապերի հիմնական ուղղություններին։ Հուլաղույանների ու նրանց անմիջական հաջորդների ժամանակներում Հայաստանում հայկական դրամներ չեն թողարկվել։

Հայկական դրամների թողարկումը Կիլիկիայում սկսվել է դեռևս Ռուբինյանների սահմանագծորական ժամանակներում և առավելապես վերջին իշխան Լևոնի օրոք։ Դրանք եղել են պղնձե դրամներ, որոնց վրա հայերեն գրերով արձանագրվել են Ռուբինյան իշխանների անունները և խաչի նշանը։ Լևոնին հայոց թագավոր օծելու տարվանից՝ 1198 թ., Կիլիկյան Հայաստանում սկսվել է մեսրոպատառ դրամների կանոնավոր թողարկումը և նրանց շրջանառությունը։ Թողարկվել են ոսկե, արծաթե ու պղնձե դրամներ։ Կիլիկիայի հայկական դրամներից ներկայումս թանգարաններում պահվում են հազարավոր նմուշներ։ Դրանց ամենամեծ բաժինը շրջանառության մեջ է մտել Լևոն I-ի թագավորության տարիներին (1198—1219)։ Թողարկվել են առավելապես արծաթե ու պղնձե դրամներ։ Ոսկե դրամները հազվագյուտ են և հայկական տնտեսության համար բնորոշ չեն։ Հիմնական միավորը հանդիսացել է 2,7—2,8 գրամ միջին քաշով բարձրորակ արծաթ դրամը, որը թողարկվել է մասսայաբար։ Կշռային այդ չափը համապատասխանում էր միջազգային շուկայում տարածված արևելյան դիրհեմի իրական քաշին։ Բուն Հայաստանում Կիլիկիայի հայկական պետության դրամները շրջանառության մեջ չեն եղել։ Հայաստանում և հարևան երկրներում կիլիկյան դրամներ կամ դրամական գանձեր չեն գտնվել։ Կիլիկյան դրամներ հայտնաբերվել են Սիրիայում, Եգիպտոսում, Հարավային Եվրոպայի երկրներում։

ОСНОВНЫЕ ГРУППЫ МОНЕТ, РАСПРОСТРАНЕННЫХ В ДРЕВНЕЙ И СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ

Х. А. МУШЕГЯН

(Резюме)

Наиболее ранние монеты, найденные в Армении, относятся к V в. до н. э. Они чрезвычайно редки и не могут характеризовать историю денежного обращения в стране. В конце IV в. до н. э. появляются греческие монеты, знаменующие установление в Армении аттической денежно-весовой системы.

К концу III в. до н. э. в западных областях Армянского нагорья, через которые проходили магистральные пути международной торговли, появились первые армянские монеты с портретами армянских царей Софены. С конца II в. до н. э. в армянские города поступают монеты Селевкидов, Аршакидов, царей Каппадокии, а также республиканского Рима. Ареал обращения собственно армянских монет расширяется с конца 80-х гг. I в. до н. э. В сфере международной торговли армянские монеты I в. до н. э. принимались наряду с римскими, парфянскими и другими монетами эллинистического мира. Серебряные монеты Тиграна II выпускались как в Армении, так и в Сирии, составляя самую многочисленную группу среди армянских монет эпохи эллинизма. Со второй половины I в. до н. э. выпуск армянских монет уменьшается и в дальнейшем прекращается.

При первых армянских Аршакидах (I—II вв. н. э.) широкое распространение получили римские монеты общеимперского типа. Но уже в следующие столетия римская денежно-весовая система в Армении теряет свое главенствующее значение. После падения Парфянского царства основной денежной единицей в Армении стала сасанидская драхма. С начала V века благодаря международной торговле, кроме сасанидских драхм, в города Армении проникают византийские золотые и серебряные монеты. С конца VI века налаживается местное монетное дело. В обращение поступают сасанидские драхмы, чеканенные в городах Двин, Партав, Нахчаван.

Переход от сасанидской денежно-весовой системы к арабской совершился в Армении на рубеже VII—VIII вв. С этого времени начинается период распространения куфических монет. Кроме монет местной чеканки, в города Армении проникали дирхемы из Сирии, Ирака, Фарса и Хузистана. Массовый выпуск аббасидских монет в Армении и в Кавказской Албании наблюдается с конца VIII века. До середины X века денежное обращение Армении развивалось в сфере внутренней и внешней торговли Арабского халифата.

С конца X в. и особенно в XI в. изменяется состав денежного обращения страны. Активную роль играли медные и золотые византийские монеты. В конце XI века серебро почти совершенно исчезает из денежного обращения. В северных областях Армении обращались медные монеты атабеков Азербайджана и Багратидов Грузии. В юго-западных же краях Армянского нагорья в обращении были медные монеты Ортукидов, Зенгидов, сельджуков Ирака, Эюбидов, Данишмендидов, Салдукидов, Бектимуридов и др. В тридцатых годах XIII в. отмечается конец «серебряного кризиса». В обращение поступают серебряные монеты сельджуков Рума и Чингизидов. Со второй половины XIII в. массовое распространение имели серебряные монеты Хулагуидов.